ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀՐԱՄԱՆ

27 հունիսի 2000 թվականի թիվ 83

«ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՐԳԻ» ՄԱՍԻՆ

Հաստատել «Ատենախոսության թեմայի հաստատման կարգը»:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Սույն կարգը սահմանվում է ՀՀ վարչապետի 1996 թվականի հուլիսի 12-ի հ. 410 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովի կանոնադրության» 3. ե) կետի համաձայն

Ատենախոսության թեմայի նորությունը, արդիականությունը, գիտական եւ կիրառական արժեքը ապահովելու նպատակով սահմանվում է ատենախոսության թեմայի հաստատման հետեւյալ կարգը.

1. Ատենախոսության թեման հաստատելու իրավունք ունեն այն գիտական հիմնարկները, կազմակերպությունները եւ բուհերը (այսուհետեւ՝ հիմնարկներ), որոնք ունեն ՀՀ ԲՈՀ-ի թույլտվությունը:
2. Թեման հաստատվում է այն անձանց համար (այսուհետեւ՝ հայցորդ), ովքեր ունեն բարձրագույն կրթության որակավորման հետեւյալ աստիճանները՝ դիպլոմավորված մասնագետ եւ մագիստրոս: Բժշկական գիտությունների բնագավառով թեմա կարող է հաստատվել միայն այն անձանց համար, ովքեր ունեն բարձրագույն բժշկական կրթություն:
3. Ատենախոսության թեման քննարկման է ընդունվում հայցորդի գրավոր դիմումի հիման վրա: Թեմայի հաստատման նպատակով հարցը քննարկվում են՝
   ա) ԲՈՒՀ-երում՝ համապատասխան ամբիոնում, ապա ֆակուլտետի կամ ԲՈՒՀ-ի գիտական խորհրդում.
   բ) գիտահետազոտական հիմնարկներում գիտական ստորաբաժանումներում, ապա կազմակերպության գիտական խորհրդում:
4. Գիտական խորհուրդն ատենախոսության թեման հաստատում է իր մասնագիտական ուղղվածությանը համապատասխանելու դեպքում, պատասխանատու է հայցորդի մասնագիտական պատրաստվածության, թեմայի նորության, կիրառական նշանակության, արդիականության համար:
5. Գիտական խորհուրդը հաստատում է ատենախոսության գիտական ղեկավար՝ թեկնածուական ատենախոսության համար եւ անհրաժեշտության դեպքում խորհրդատու՝ դոկտորական ատենախոսության համար, գիտական ղեկավարի կամ խորհրդատուի համաձայնությունը պարտադիր է: Երկու մասնագիտություններով կատարվող թեկնածուական աշխատանքները կարող են ունենալ երկու գիտական ղեկավար:

Գիտական ղեկավար կարող են նշանակվել տվյալ բնագավառի գիտության դոկտորները, ինչպես նաեւ այն թեկնածուները, ովքեր ստացել են ԲՈՀ-ի համաձայնությունն ատենախոսության ղեկավար լինելու համար:

Ատենախոսության ղեկավարության թույլտվություն ստանալու համար ԲՈՀ է ներկայացվում՝ հիմնարկի ղեկավարի միջնորդությունը, թեկնածուի տպագիր աշխատանքների ցուցակը եւ գիտական խորհրդի նիստի արձանագրությունից քաղվածք:
ԲՈՀ-ը որոշում ընդունում է փաստաթղթերի ընդունման օրվանից մեկ ամսվա ընթացքում: Գիտական ղեկավարի թույլտվություն կարող են ստանալ այն անձինք, որոնք ունեն 15-ից ոչ պակաս տպագիր գիտական աշխատանքներ համապատասխան թեմայի շրջանակներում:
6. Գիտական խորհրդի նիստում քննարկման եւ քվեարկության կարգը սահմանվում է գիտական խորհրդի կանոնադրությամբ:
7. Ատենախոսության թեմայի հաստատման որոշման մեջ նշվում են թեմայի անվանումը, գիտության բնագավառը եւ մասնագիտությունն ըստ աստիճանաշնորհման անվանացանկի, հայցորդի ղեկավարը կամ խորհրդատուն:

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
«18» 07 2000 Թ.
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԹԻՎ 30300066